թիւնը, Զօրա-Տնտեսական Ընկերութիւնը, Հայաստանի Շախմատիստների Ընկերութիւնը, «Դիւցազն» մարզական ակումբը Երևանում, Երիտասարդ գրագէտների «Պանդոկ» խումբը, Երևանի Հայուհեաց Միութիւնը, Հայաստանի «Մանկապարտէզ» Ընկերութիւնը, Վասպուրականի Կանանց Միութիւնը, «Ռոստոմ» գրադարանը, 20-ի չափ հայրենակցական ընկերութիւններ և այլն:

Հանրային կրթութեան և արուեստի նախարարութեան կից ստեղծուեց Հայաստանի Հնութեանց Պահպանութեան Կոմիտէ, որի նպատակն էր պահել Հայաստանի հնութիւնները, թոյլ չտալ, որ փչանան մարդկանց ձեռքով կամ բնական պատահարներից ու ժամանակի ազդեցութիւնից, փլչելու ենթակայ շէնքերին հասցնել ճարտարապետական օգնութիւն, ոչընչացման դատապարտուած հնութիւնները նկարել, քանդակել և այլն: Կոմիտէին էր վերապահուած նաև հսկողութիւնը պեղումների վրա կամ անմիջապէս պեղումներ կատարելը:

Հնութեանց Պահպանութեան Կոմիտէի կազմն էր. պրոֆեսորներ Գարեգին եպ. Յովսէփեան, ակադ. Ա. Թամանեան, Աշխարհբէգ Մելիք-Բալանթարեան: Կոմիտէի հետաքրքրութեան ու գրաղումի առաջին առարկան եղան Անիի աւերակները: Ճարտարապետ Թ. Թորոսմանեանի ղեկուցման հիման վրա դիւղատնտեսութեան նախարարութիւնը որոշեց Հնութեանց Պահպանութեան Կոմիտէին յատկացնել լքեալ Անի գիւղի հողերը, տրամադրեց սերմացու, և այդ գիւղը դարձաւ Անիի հնութիւնների պահպանութեան կենտրոն: Ճարտ. Թորոսմանեանը հաստատուեց այնտեղ:

1920թ. յուլիսին, Կոմիտէն կազմակերպեց գիտական մեծ արշաւանք, որին մասնակցեցին ճարտարապետներ Թորոսմանեանն ու Տէր-Միքայէլեանը, հայ արուեստին քաջածանօթ ռուս ճարտարապետ Գալկինը, նկարիչ Եղիշէ Թադէոսեանը իր աշակերտներ Մկ. Մարգարեանի և Ստ. Թարխարարեանի հետ, նկարիչ Տեղոյեան ամուսինները, «Գեղարուեստ»-ի խմբագիր Գ. Լևոնեանը, լուսանկարիչ Վաղ. Յակոբեանը և ուրիշներ: Արշաւախմբին մասնակցում էին և Կոմիտէի անդամներ Գարեգին եպ.-ը և Մելիք-Բալանթարեանը:

Արշաւախումբը իր աշխատանքների կենտրոն ընդունեց Անին, որտեղից ստիպանաբար պիտի տարածուէր դէպի Կարս, Ալեքսանդրապոլ և Արարատեան դաշտ: Այսպիսով, ամբողջ երկիրը հետազօտելուց յետոյ, պիտի կազմէր Հայաստանի հնագիտական քարտէսը: Հետազօտութիւնները կատարուում էին նախօրօք մշակուած ծրագրի համաձայն: Զուգընթացաբար հաւաքում էին որմանկարներ, յատակագծեր, շէնքերի և արժէքաւոր տեղերի, խաչքարերի, արձանագրութիւն կրող քարերի ու շէնքերի, քանդակների, պատկերների նկարները: Հաւաքուած նիւթերը պիտի կենտրոնացուէին մայրաքաղաքի պետական թանգարանում, պիտի հիմնուէին տեղական թանգարաններ: Հնագիտական հետազօտութիւնների տեսակէտից երկիրը բաժանուել էր մի քանի շրջանների, որոնք հետևեալ պիտի ուսումնասիրուէին: